

ծընթացին, ուստի՝ կարող է հաշվի առնել կուտակված փորձը եւ կատարել որոշակի քայլեր: Առաջին հերթին անհրաժեշտ է ճիշտ գնահատել Հայաստանի համեմատական առավելությունները եւ ըստ այդմ որոշել այն առաջնայնությունները, որոնք հաշվի առնելով կարող ենք մասնակցել այդ գործընթացին:

Երկրորդ, Հայաստանի Հանրապետությունը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի իր տնտեսական առաջնայնությունների ֆինանսավորմանը, տեխնոլոգիական վերագինման եւ զարգացման խնդիրներին, որպեսզի ավելի ամրագրվեն այդ ոլորտների համեմատական առավելությունները:

Կարծում ենք՝ Հայաստանի թիվ մեկ առաջնայնությունը մարդկային կապիտալի զարգացումն է, տնտեսության մեջ բարձր որակավորում ունեցող մասնագետների զբաղվածության կայունացման եւ նրանց կարողությունների արդյունավետ օգտագործման խնդիրները: Դա կարելու է ևս եւ այն պատճառով, որ Հայաստանը բնական հարուստ ռեսուրսներ չունեցող երկիր է, ուստի էլ չի կարող ընտրել ճգնաժամի հաղթահարման այն ճանապարհը, որով ընթանում են բնական հարուստ պաշարներ ունեցող՝ զարգացող տնտեսությունները:

Երկա ճգնաժամից հետո ընկած ժամանակահատվածում կարելու էր գուցե խնդիրը տնտեսական աճի ներուժի բարձրացումն է: Սա վերաբերում է անցումային տնտեսությանը բոլոր երկրներին (այդ թվում՝ Հայաստանին), որոնց բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մակարդակները շարունակում են մնալ ցածր: Ընդգեղծելու է բնական այլ ռեսուրսներ արտահանող երկրներում ռեսուրսների նկատմամբ համաշխարհային պահանջարկը տնտեսական աճի շարժիչ ուժ կդառնա, մինչդեռ մյուս երկրները ստիպված են լինելու փնտրել տնտեսության զարգացման այլ ուղղություններ: Մասնավորապես՝ Ընդգեղծելու է ռեսուրսներ ներմուծող երկրների դեպքում նավթի գների բարձրացումը կարող է տնտեսական աճի արգելք հանդիսանալ, թեև դրա հետ մեկտեղ կնկատվեն նաեւ տարածաշրջանում եւ Ռուսաստանում Ընդգառնեսուրսներ արտահանողների կողմից դրական երկրորդային էֆեկտները: Նկատի ունենալով արդյունաբերական զարգացած երկրներում տնտեսական աճի կանխատեսվող դանդաղ վերականգնումը, հետագա աճի համար օգտակար կարող է լինել արտահանման դիվերսիֆիկացումը տարածաշրջանի սահմաններում՝ զարգացող երկրների ձեռավորվող շուկաների ուղղությամբ: Ընդգառնեսուրսներ ներկրող երկրների մեծ մասը կարող է օգուտներ քաղել հետագայում իրականացվող բարեփոխումներից, որոնք կաջակցեն մասնավոր հատվածի գործունեությանը եւ կբարելավեն ներդրումային միջավայրը:

Դիվերսիֆիկացիա (diversification) կամ բազմազանություն հասկացությունը մեկնաբանվում է հետեւյալ կերպ. տարածաշրջանում արդյունաբերության ճյուղերի բազմազանություն կամ էլ ընկերությունների կողմից առաջարկվող ապրանքների լայն տեսականու առկայություն: Առաջին դեպքում, տարածաշրջանային արդյունաբերական կառուցվածքի դիվերսիֆիկացման հետ մեկտեղ, ավելանում են արդյունաբերության ճյուղերը, ինչն իր հերթին նպաստում է զբաղվածության հնարավորությունների ավելացմանը: Այնպիսի տարածաշրջաններում, որտեղ դեռեւս առկա են արդյունաբերական ճյուղերի ճգնաժամի հետեւանքները, կառավարության, պետական մարմինների ազգամվարությունը դիվերսիֆիկացիան է, որը նպատակաւորված է տեղում զբաղվածության մակարդակի ավելացմանն ու կայունացմանը:

Ընկերությունների տեսանկյունից դիվերսիֆիկացիան նշանակում է շուկաներում առաջարկվող ապրանքների տեսականու ընդլայնմանն ուղղված քաղաքականություն, ինչը հիմնավորվում է այն բանով, որ նվազեցվում է քիչ թվով ապրանքների թողարկումից կախվածությունը: Ընկերությունների դիվերսիֆիկացումը հաճախ իրականացվում է միաձուլումների եւ կլանումների ճանապարհով, ընդ որում՝ կլանված ընկերության (victim company)՝ շուկայում վաճառվող ապրանքներն օգտագործվում են կլանած ընկերության (raider firm) ապրանքային տեսականու ընդլայնման համար:

Օգտագործվում է նաեւ դիվերսիֆիկատոր (diversifier) հասկացությունը, որը կիրառելի է ներդրողների առումով: Դրանք այնպիսի ներդրողներն են, որոնք իրենց ունեցվածքի մի մասը պահում են փողի տեսքով, իսկ մնացածը՝ արժեթղթերում (հիմնականում պետական, ոսկով ապահովված արժեթղթերում): Տոկոսադրույքների աճի ժամանակահատվածում այդպիսի ներդրողները ձգտում են իրենց ունեցվածքի մեծ մասը վերածել արժեթղթերի՝:

Դիվերսիֆիկացիա նշանակում է նաեւ տարբեր ակտիվներում ներդրումներ կատարելու եղանակով ռիսկի նվազեցում, իսկ դիվերսիֆիկացիայի սկզբունքը սահմանվում է որպես տնտեսություն, որի համաձայն՝ ներդրողները ռիսկային ակտիվների տարբերակման միջոցով կարող են նվազեցնել ընդհանուր ռիսկը՝ առանց եկամտաբերության կորստի՝:

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման մյուս հիմնահարցը կապված է դրամական փոխանցումների հետագա դիմամիկայի հետ: Դրանք արագ աճը մինչեւ 2008թ. ընկած ժամանակահատվածում սերտ կապված էր Ռուսաստանում եւ Հայաստանում շինարարության ոլորտի դինամիկ զարգացման հետ: Հաշվի առնելով Ռուսաստանի տնտեսության ավելի սահմանափակ հեռանկարները՝ հավանաբար

1. Նշենք, որ անցումային տնտեսությամբ 30 երկրների շարքում Հայաստանը, 2009թ. արձանագրված 14.4% ՀՆԱ անկմամբ, վերջից երրորդ տեղն է զբաղեցնում: Ավելի խոր անկում տեղի է ունեցել միայն Լիտվայում (18.4%) եւ Լատվիայում (-16.0%) . տես՝ Transition report 2009, Transition in crisis?, EBRD, 2009, p. 21:

2. Համեմատությունների համար կարելի է ուսումնասիրել մասնավորապես՝ 33 ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999թ. հունվար-դեկտեմբերին, Եր. 2000, 33 ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-դեկտեմբերին, Եր. 2010

3. Դրանք ակտիվիված են օրինակ՝ Հարությունյան Վ., Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ, 33 ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր. 2009, 146 էջ, Պետրոսյան Մ., Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները արդի պայմաններում, Եր., Էդիթ Պրինտ, 2009, 240 էջ

բանկային փոխանցումները դեռեւս մի քանի տարի կպահպանվեն ավելի ցածր մակարդակի վրա, քան նախաճգնաժամային ժամանակաշրջանում: Հետեւաբար՝ Հայաստանը, որը զգալի չափով հիմնվել է աշխատող-արտագաղթողների միջոցների վրա, պետք է ուղիներ փնտրի՝ ապահովել վերադարձող արտագաղթողների զբաղվածությունը: Թեեւ աշխատուժի այդ ներհուսքը կարող է ստեղծել լրացուցիչ հնարավոր աճ, դրա իրացման համար կպահանջվեն զգալի ներդրումներ: Ըստ որում՝ մոտակա հեռանկարում վերադարձող արտագաղթողները մեծացնելու են բյուջետային ռեսուրսների վրա ճնշումը: Այդ պայմաններում պետությունը պետք է կարողանա սոցիալական պատշաճ պաշտպանություն (այդ թվում՝ մասնագիտական պատրաստվածություն) ապահովել:

ՀՀ կառավարությունը դեռեւս լրացուցիչ սոցիալական պարտավորություններ չի ստանձնում, քանի որ 2010թ. եւ հաջորդ տարիների ռիսկերն ամբողջությամբ բացահայտված չեն, սակայն շարունակում է հակաճգնաժամային միջոցառումները՝ հաշվի առնելով 2009թ. դասերը, որոնց շարքում կարող ենք նշել Հայաստանի տնտեսության դիվերսիֆիկացման ցածր մակարդակը, տնտեսության մեջ մենաշնորհների առկայությունը եւ մրցակցության ցածր մակարդակը, բարեփոխումների դանդաղ ընթացքը:

Մենաշնորհների վերացման համար ՀՀ կառավարությունը մտադիր է շարունակել եւ խորացնել հարկային վարչարարության բարեփոխումները, բարելավել տնտեսական մրցակցությունը, խոշոր բիզնեսի գործունեությունը դարձնել հրապարակային եւ թափանցիկ:

Տնտեսությունը դիվերսիֆիկացնելու աշխատանքները պետք է ակտիվանան այն ոլորտներում, որտեղ Հայաստանն ունի (կամ որոշակի ջանքերի գործադրման դեպքում մոտ ապագայում կարող է ունենալ) հարաբերական առավելություններ: Մասնավորապես՝ մեծ ներուժ ունի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը: Չարգացման լավ հեռանկարներ կան գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, օրգանական գյուղատնտեսության զարգացման, հանքահումքային ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: Արտահանման տեսանկյունից հեռանկարային է նաեւ էներգետիկայի ոլորտը: Բարեփոխումները, սակայն, ցանկությունից բացի դրամական լուրջ ներդրումներ են պահանջում:

2009-10թթ. Մրցունակության համաշխարհային զեկույցում Հայաստանի մրցունակության ներկա ամենաեական տասը թերությունների շարքը գլխավորում է հակամենաշնորհային քաղաքականության անարդյունավետությունը, որի հետեւանքով շուկայում առկա են գերիշխող խմբեր, իսկ տնտեսական մրցակցության մակարդակը ցածր է: Հիմնական մյուս թերությունը մաքսային ընթացակարգերի բեռն է, որն էլ, մասնավորապես, չի նպաստում երկրի արտահանման ներուժի զար-

գացմանը:

Հայաստանի մրցակցային հիմնական առավելություններն են՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի եւ մալարիայի տարածվածության ցածր մակարդակը եւ դրանց ազդեցությունը գործարարության վրա, որոնց հետեւում են՝ պետական պարտքի փոքր չափը, աշխատանքի շուկայի կարգավորումը, ինչպես նաեւ գյուղատնտեսության ոլորտում վարվող քաղաքականությունը, հանցագործությունների եւ ահաբեկչության հարուցած ծախսերը³:

Այսպիսով՝ Հայաստանն աշխարհի բազմաթիվ երկրներից ետ է մնում այն հիմնական պարամետրերով, որոնք անհրաժեշտ են երկրի արտահանման ներուժի ավելացման համար:

Հայտնի է նաեւ, որ արտաքին շուկաներում գոյություն ունի խիստ մրցակցություն: Ավելին՝ արտաքին շուկաներում իրենց արտադրանքն են սպառում կամ ՀՀ ընկերությունների մրցակիցներն են զարգացած երկրների առաջատար ընկերությունները: Օրինակ՝ բյուրեղների աճեցման, մասնավորապես՝ սապֆիրի, ոլորտում միջազգային շուկաներում առաջատար են Ռուսաստանի Դաշնության 3-4, ԱՄՆ-ի 2-3 ընկերություն: Դրանք հիմնականում հսկայական ընկերություններ են՝ արտադրական հզոր կարողություններով: Բնական է նաեւ, որ արտադրության ծավալներով հայկական ընկերությունները չեն կարող դրանց հետ մրցակցել, սակայն առանձնահատուկ շուկաներում, որտեղ իրացվում են հայկական ապրանքները, լիովին հնարավոր է այդպիսի մրցակցությունը, նույնիսկ միջնորդավորված ձևով: Այսպիսի դեպքերում պետք է միջազգային շուկայում գտնել համապատասխան նիշան: Եթե շարունակելու լինենք բերված օրինակը, այն բանից հետո, երբ բյուրեղները աճեցվում են, անհրաժեշտ է դրանք վերածել արտադրանքի եւ դա աշխատանքի, ոչ պակաս ղեկար մասն է: Եվ կախված պատվիրատուի ցանկությունից՝ բյուրեղ աճեցնող հայկական ընկերությունը կարող է այդպիսի առանձնահատուկ շուկաներ մատակարարել ինչպես բյուրեղներ, այնպես էլ դրանց հիման վրա պատրաստված արտադրանք:

Արտահանման հնարավորությունների, մասնավորապես բարձր տեխնոլոգիաների (տես՝ աղյուսակը), ավելացման գործում զգալի դեր ունեն հարկային եւ մաքսային խթանները: Սակայն իրականությունն այն է, որ հատկապես հարկային դաշտը թույլ է խրախուսում հանրապետությունում բարձր տեխնոլոգիաների զարգացումն ու դրանց արտահանումը:

Աղյուսակի տվյալներից հետեւում է, որ Հայաստանում հետազոտությունների եւ զարգացման համար կատարված ծախսերը (2000-06թթ., % ՀՆԱ-ի նկատմամբ) աշխարհի միջին ցուցանիշից ցածր են 11 անգամ, իսկ բարձր տեխնոլոգիաների արտահանումը (% վերամշակող արդյունաբերության արտահանման նկատմամբ)՝ 9 անգամ:

Այդ տեսանկյունից անհրաժեշտ է հարկային արտոնություններ սահմանել բոլոր արտահանողների համար, անկախ այն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆ Է

Արա
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
«Ամերիա»
ՓԲԸ
Ֆինանսական
տնօրեն

Պիտույունը և տեխնոլոգիաները աշխարհի մի շարք երկրներում *

Երկրները	Պիտույունը և տեխնոլոգիաների անվանումները 2005	Չեղարկույունների և գաղափարների համար կատարված ծախսերը (% ՀՆԱ-ի նկատմամբ) 2000-2006	Բարձր տեխնոլոգիաների արտահանում	
			մլն դոլար 2007	% արդյունաբերական արտադրանքի արտահանման նկատմամբ 2007
Հայաստան	180	0.21	9	2
Ադրբեջան	116	0.22	15	4
Բելառուս	490	0.68	346	3
Էստոնիա	439	1.15	840	12
Վրաստան	145	0.18	39	7
Իրան	2635	0.59	375	6
Ղազախստան	96	0.28	1470	23
Ղրղզստան	...	0.20	8	2
Լատվիա	134	0.69	353	7
Լիտվա	406	0.80	1214	11
Մոլդովա	89	...	14	5
Ռուսաստան	887	0.46	1178	4
Տաջիկստան	...	0.10
Թուրքիա	7815	0.76	328	0
Թուրքմենստան
Ուկրաինա	2105	1.03	1314	4
Ուզբեկստան	157
Գերմանիա	44 145	2.52	155 922	14
Չինաստան	41 596	1.42	336 988	30
Մալայզիա	615	0.60	64 584	52
Կորեայի Հանրապետություն	16 396	3.23	110 633	33
Մինգապուր	3609	2.39	105 549	46
Միացյալ Թագավորություն	45 572	1.80	63 066	19
ՍՄՆ	205 320	2.61	228 655	28
Աշխարհը	708 086	2.30	1 807 189	18

* World Development Indicators 2009, WB, pp. 314-316.

բանից, թե ինչպիսի արտադրանք են նրանք թողարկում (սպառման, թե արտադրա-տեխնիկական նշանակության): Ըստ որում՝ հարկային արտոնությունը պետք է սահմանել առաջադիմական ասնորակի տեսքով, այսինքն՝ որքան շատ է թողարկվող արտադրանքի մեջ արտահանման բաժինը, այնքան պետք է մեծ լինի հարկման արտոնյալությունը:

Այս եւ հարկային մյուս արտոնյալությունների կիրառումը պայմանավորված է հանրապետության արտահանման եւ ներմուծման զգալի չափերի հասնող բացասական հաշվեկշռով: Արտաքին առևտրաշրջանառության բացասական սալորն վերացնելու նպատակով առաջիկայում պետք է մշակել երկրի մրցունակությունը բարձրացնելու, արտահանման ծավալներն ավելացնելու եւ արտաքին շուկաներում միջոցներ վաստակելու ազգային ծրագիր: Ավելին՝ առաջիկա 5-7 տարիների հանրապետության հարկաբյուջետային եւ դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակը, կարծում ենք, պետք է լինի արտահանման ծավալների ավելացումը:

Արտահանման խթանման գործում էական դեր ունի նաեւ մաքսային գործոնը: Բանն այն է, որ եթե մինչեւ համաշխարհային տնտեսական ճգնաժամը արտահանող ձեռնարկությունների մատակարարումների դիմաց վճարումներն արվում էին ժամանակին, այժմ այդ շրջան խայթարվել է, որը նկատվում է ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում: Երբ ձեռնարկությունը ժամանակին չի ստանում առաքած արտադրանքի դիմաց վճարը, բնական է, որ այդ դեպքում ձեռնարկությունը չի կարող ժամանակին վճարել հարկերը: Նման դեպքերում արտահանող ընկերություններին «կարգի հրավիրելու» համար ընդունված է կիրառել այնպիսի պատժամիջոց, ինչպես արտահանման եւ ներմուծման մաքսային արգելակումը: Շատ հաճախ արտադրանքը գտնվում է մաքսատանը, եւ ձեռնարկությանը թույլ չեն տալիս այն արտահանել, ինչն անհեթեթություն է, քանի որ եթե արտահանողին թույլ չեն տալիս արտահանել արտադրանքը, ապա հարց է առաջանում, թե էլ որտե-

ղից կարող է երկիր մուտք լինել արտադրանք, որպեսզի դրանից էլ վճարվեն հարկերը: Հասկանալի է նաեւ, որ նման իրավիճակում, երբ ուշացվում կամ դադարեցվում են արտադրանքի մատակարարումները, դա կարող է հանգեցնել զգալի տուգանքների, իսկ հաճախակի կրկնվելու դեպքում՝ նաեւ մատակարարի կամ մատակարարների կորստին, ինչը համարժեք է մեծ դժվարություններով ձեռք բերված շուկաների կորստին: Սակայն մեզանում, ցավոք, նման պրակտիկան համարում են միջոց հասնելու այն բանին, որպեսզի ձեռնարկությունը պարտաճանաչ վճարի նախատեսված հարկերը: Անկասած է, որ ձեռավորված նման պրակտիկան ունի հակապետական բնույթ, որը մեծ հաշվով որդեւ խնդիր չի լուծում, այլ հակառակը՝ կործանում է ձեռնարկությունը եւ դրանով իսկ չի նպաստում հարկերի հավաքելիության մակարդակի բարձրացմանը: Հարկ է նաեւ ավելացնել, որ միջազգային շուկայում ապրանքի մրցունակությունը պահպանելու համար ոչ մի թույլ չպետք է թուլանալ եւ այդ մասին պետք է միշտ հիշել ու միջոցներ ձեռնարկել: Կարելի է նաեւ նկատել, որ ներքին փոքր շուկա եւ ցածր գնողունակություն ունեցող երկրների փրկության ուղին ու միջոցը համաշխարհային շուկան է, որն ըստ էության սահմաններ չունի, եւ կարելի է արտադրանքը սպառել շատ մեծ ծավալներով: Ամենակարելիորը արտադրանքի «որակ-գին» հարաբերակցության այնպիսի սահմանում է, որը կպահպանի ապրանքի մրցունակությունը: Դա թերեւս ամենաբարդ խնդիրն է, որը պետք է լուծել, քանի որ համաշխարհային շուկայի ցանկացած հատվածում ընթանում է կատաղի պայքար եւ մրցակցություն:

Արտահանման խթանման դրամավարկային քաղաքականության հիմնական գործոնը ազգային արժույթը դրա շուկայական արժեքին մոտեցնելն է: Թեեւ ՀՀ կենտրոնական բանկը նպաստում է արտադրության կուրսին աջակցմանը, սակայն իրավիճակը եւ հատկապես արտահանում-ներմուծում հարաբերակցությունը (բազմակի հոգուտ ներմուծման) վկայում են, որ այդ կուրսը պետք է իջեցնել, որպեսզի այն մոտեցվի շուկայական արժեքին:

Հայաստանը որոշակի հնարավորություններ ունի ավելացնել արտահանման ծավալները՝ արտաքին աշխարհի հետ կապող հաղորդակցության ուղիների բարելավման միջոցով: Կարելի է գործունեորեն շարքում, որոնք կարող են նպաստել արտահանման ավելացմանը, Հայաստան-Թուրքիա սահմանի բացումն է: Դա հնարավորություն կտա Թուրքիայի եւ դրա միջոցով նաեւ մյուս երկրների շուկաները բացել Հայաստանի տնտեսության համար եւ դրանով իսկ առաջին հերթին կրճատել տրանսպորտային փոխադրումների ծախսերը՝ բարձրացնելով հայկական ապրանքների մրցունակությունը միջազգային շուկաներում: Բավական է նշել, որ տրանսպորտի բոլոր տեսակների եւ բեռնափոխադրումների ապահովագրության ծախսերը Հայաստանի Հանրապետությունում ունեցել են աճի միտում: Այսպես, 2005թ. նշված ծախսերի մեծությունը կազմել է 130.41 մլն դոլար, 2006-ին՝ 145.41 մլն դոլար, 2007-ին՝ 257.16 մլն դոլար, 2008-ին՝ 375.39 մլն դոլար, իսկ 2005-08թթ. այդ ծախսերի միջին տարեկան մեծությունը կազմել է 227.0 մլն դոլար: Ընդ որում՝ նշված ժամանակահատվածում նկատվել է նաեւ արտաքին առևտրաշրջանառության ծավալի մեջ նշված ծախսերի տեսակարար կշռի ավելացման միտում. 2005թ. այդ հարաբերակցությունը կազմել է 4.7%, 2006-ին՝ 4.6%, 2007-ին՝ 5.8%, 2008-ին՝ 6.8%, իսկ 2005-08թթ. միջին մեծությունը կազմել է 5.7%: Համեմատության համար նշենք, որ այդ ցուցանիշը Եվրամիության երկրների համեմատ բարձր է շուրջ 4 անգամ:

Թեեւ ճգնաժամը շարունակվում է, սակայն այսօր արդեն ՀՀ առևտրային հիմնական գործընկեր-երկրներում նկատվում է պահանջարկի աճ, ինչը կարող է բարելավել ՀՀ-ից արտահանման պայմանները (խոսքն ամենից առաջ վերաբերում է լեռնահանքային արդյունաբերության արտադրանքին):

Արտահանման աճին նպաստող մյուս գործոնը արտահանման-ներմուծման շուկաների ազատականացումն է տնտեսության մեջ մրցակցային միջավայրի բարելավումը, ինչը կնպաստի աշխատանքի արտադրողականության եւ ձեռնար-

կույրունների մրցունակության աճին: Սա է երկրի մրցունակության բարձրացման մայրուղին, որը պահանջում է տնտեսության լուրջ բարեփոխումներ: Սա թերեւս ՀՀ կառավարության ամենալուրջ հիմնախնդիրն է, որի լուծումից էլ կախված է տնտեսության հետագա հաջողությունը եւ բնակչության բարեկեցության աստիճանը:

Հայաստանում հակաճգնաժամային տնտեսական քաղաքականության մշակման ընթացքում, մեր կարծիքով, պետք է նախատեսել հետեւյալ ուղղությունները.

- ✓ տնտեսության դիվերսիֆիկացումը,
- ✓ մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխականության աստիճանի նվազեցումը,
- ✓ ֆինանսական հատվածի զարգացումը,
- ✓ գույքային անհավասարության աստիճանի նվազեցումը:

Մանրամասնելով այս չորս ուղղությունները՝ նշենք, որ **տնտեսության դիվերսիֆիկացումը** թույլ է տալիս վերացնել անմրցունակության հիմնական պատճառը՝ տնտեսության խեղաթյուրումը: Տնտեսության դիվերսիֆիկացման խնդրի լուծմամբ նպաստավոր պայմաններ են ստեղծվում ներդրումային կապիտալի ներգրավման, ինստիտուտների գործունեության կատարելագործման համար: Որոշակի խմատով դիվերսիֆիկացման գործում է որպես ինստիտուցիոնալ բարեփոխումների անշրջելիության ապահովման մեխանիզմ: Եթե անգամ դրա իրականացման համար տեսանելի հեռանկարում մեծ ծախսեր են պահանջվում (օրինակ՝ մարդկային ներուժի զարգացման համար), երկարաժամկետ հեռանկարում դիվերսիֆիկացման արդյունքում կավելանան ներդրումների ծավալները, եւ կարագանան տնտեսական աճի տեմպերը: Միաժամանակ՝ այդ հանգամանքը ավելի է ապահովագրում երկրի տնտեսությունը արտաքին ցնցումներից եւ դրանով իսկ նվազեցնում մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխականության աստիճանը:

Ֆինանսական ոլորտի զարգացման նպաստավոր պայմանների ստեղծումը դիտարկվում է որպես հորիզոնական դիվերսիֆիկացման միջոց, քանի որ նշված խնդրի լուծմամբ հնարավորություն է ստեղծվում առաջին հերթին խրախուսել այն ընկերությունները, որոնք առավելապես կախված են ֆինանսավորման արտաքին աղբյուրներից եւ գործում են ռեսուրսների արդյունահանման հետ կապ չունեցող տնտեսության ոլորտներում:

Բացի նրանից, որ այս հանգամանքն իր ուղղակի դրական ազդեցությունը կունենա տնտեսական աճի տեմպերի ապահովման գործում (հատկապես՝ ներդրումներ իրականացնելու եւ կրթություն ստանալու հնարավորություն ունեցողների շարքերի ավելացման հաշվին), գույքային անհավասարության նվազեցմանն ուղղված միջոցները կարող են եւս մեկ խնդիր լուծել՝ կրճատել անհատական օգուտներ ձեռք բերելու հնարավորություն ունեցող անձանց ու տնտեսավարող սուբյեկտների թիվը:

Տնտեսական քաղաքականության նշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է կիրառել որոշակի գործիքակազմ, որը հակիրճ կներկայացնենք ստորեւ:

Տնտեսության դիվերսիֆիկացումը հաճախ իրականացվում է ուղղահայաց արդյունաբերական քաղաքականության միջոցների կիրառմամբ: Այդ միջոցներից է «հաղթող ընկերությունների ընտրությունը», որի ժամանակ նպաստավոր տնտեսական ռեժիմ է ստեղծվում որոշակի՝ ընտրված ընկերությունների համար, որոնք գործունեություն են ծավալում երկրի արդյունաբերության մրցունակ ճյուղերում (օրինակ՝ դրանք կարող են վերամշակող արդյունաբերության ընկերություններ լինել): Նպաստավոր ռեժիմը կարող է ներառել հարկային արտոնությունների սահմանումը՝ հարկերի դրույքաչափերի իջեցումը, սուբսիդիաների (լրավճարների) տրամադրումը, օտարերկրյա ընկերություններից պաշտպանությունը կամ ուղղակի պետական ներդրումների իրականացումը:

Եթե նշված միջոցները կիրառելի չեն, ապա որպես այլընտրանք կարող են սահմանվել հորիզոնական միջոցները, որոնք դիվերսիֆիկացման խթաններ են ստեղծում՝ առանց առանձնացնելու հստակ ոլորտներ կամ ընկերություններ: Հորիզոնական միջոցների կիրառման ժամանակ սահմանվում են պայ-

մաններ, որպեսզի բարձրանա տնտեսության բոլոր ոլորտներում ֆիզիկական եւ մարդկային կապիտալում իրականացվող մասնավոր ներդրումների եկամտաբերությունը: Այդպիսի միջոցները նախատեսում են գույքային իրավունքների պաշտպանություն ուժեղացում, պայմանագրային պարտավորությունների կատարման եւ ֆինանսական կարգավորման մեխանիզմների ուժեղացում, ինչպես նաեւ կրթության ու ենթակառուցվածքների ոլորտների ֆինանսավորումը, ֆինանսական հատվածի զարգացմանն աջակցություն:

Ուումասիրությունների արդյունքները վկայում են, որ տնտեսության դիվերսիֆիկացման ուղղահայաց միջոցները միշտ չէ, որ լավ արդյունքներ են ապահովում՝ հասկապես այն երկրներում, որտեղ շուկայական ինստիտուցիոնալ համակարգը թույլ է զարգացած: Ուղղահայաց միջոցների կիրառումը թույլ է տալիս, որ պետական կառավարման ապարատում աշխատող պաշտոնյաները առաջնությունը տան ոչ թե տնտեսության արդյունավետության բարձրացմանը, այլ լծակներ ստեղծեն անձնական օգուտների ապահովման համար:

Ինչ վերաբերում է դիվերսիֆիկացման քաղաքականության հորիզոնական միջոցներին, դրանք էլ հեշտ չի իրականացնել շուկայական ինստիտուտների թույլ զարգացածության պայմաններում: Իրականում պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման մեխանիզմների ուժեղացումը եւ ինստիտուտների որակի բարձրացումը տնտեսության դիվերսիֆիկացման վերջնական նպատակներն են, քանի որ դա թույլ է տալիս խթանել ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումը:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսության դիվերսիֆիկացման աստիճանը կարելի է որոշել արդյունաբերական արտադրության կառուցվածքի եւ ապրանքների արտահանման վերլուծության միջոցով: Արտահանման վերլուծությունը կարելի է իրականացնել համադրելի միջազգային ցուցանիշների հիման վրա, ինչը թույլ է տալիս նաեւ ավելի հստակ գնահատել մրցունակության մակարդակը: Դա տեղի է ունենում, քանի որ յուրաքանչյուր երկիր արտահանում է այն ոլորտի արտադրանքը, որտեղ հարաբերական առավելություններ ունի: Արտահանվող արտադրանքի գները սահմանվում են միջազգային շուկաներում եւ ավելի դժվար են փոփոխվում, իսկ արտահանման կառուցվածքի վրա դժվար է ազդել միայն հովանավորչական միջոցների կիրառմամբ: Այս մոտեցման բացասական կողմն այն է, որ հնարավոր է արտահանման կառուցվածքից դուրս մնան համաշխարհային ծավալով մրցունակ, սակայն արտահանման համար չնախատեսված արտադրությունները, ինչպես նաեւ ֆինանսական ծառայություններն ու զբոսաշրջության ոլորտը: Նշվածից կարող ենք հետեւություն անել, որ կարելի է դիտարկել ինչպես արտահանման կառուցվածքի, այնպես էլ արտադրության կառուցվածքի հիմնախնդիրները:

1. Словарь современной экономической теории Макмиллана, Под общ. ред. Дэвида У. Пирса, Пер. с англ., М.: ИНФРА-М, 2003, с. 136.
 2. Ֆինանսներ, դրամաշրջանառություն եւ վարկ, Դասագիրք, գլխ. խմբ.՝ պրոֆեսոր Լ. Հ. Բաղանյան, Եր., ՄՈՒ ՄՊԸ, 2010, էջ 575
 3. Հայաստանի ազգային մրցունակության գեկույց 2009: Նորարարության Էկոհամակարգի սերմանումը, «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոն, 2009, էջ 20
 4. ՀՀ ԱԿԾ, Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը, 2005-2008, Կիճակագրական ժողովածու, Եր. 2009, էջ 10-15